

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

1995 թվականի ապրիլի 4-ը հիրավի դարձավ պատմական պահ համայն աշխարհի հայության համար: Պատմական, քանզի ի լուսավորություն և հպարտություն համայն հայության, վեց դարերի մշուշի խորքից կրկին Սուրբ Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական հովվապետական գոհին Ամենայն Հայոց Կաթողիկոսը բազմում է խորին խորհրդով՝ իր անկախությունը վերակերտած Հայաստանի Հանրապետությունում:

Վեհափառ Տեր.

Որդիական մեծագույն ակնածանքի դրսևորում ընդունեք մեր ջերմ բարեմաղթությունները և շնորհավորանքները այդ պատվավոր և միաժամանակ չափազանց պատասխանատու ընտրության կապակցությամբ:

Անսասանություն՝ Աստծո կամոք հիմնադրված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Ձեր նվիրապետական հովվապետությամբ՝ մեր ողջ ժողովրդին:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը նշանակալի այս ընտրության առթիվ շնորհավորում է համայն հայությանը, համոզմունք հայտնելով, որ Գարեգին Ա Վեհափառ Հոր գահակալությունը կնշանավորվի Հայ Առաքելական Եկեղեցու միաբանությամբ, հայրենիքի հզորացման նվիրումով, մեր ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքի վերածնունդով և շինարարական մեծագույն ձեռնարկումներով:

Խորին հարգանքով՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԲԱԲԿԵՆ ԱՐԱՐՔՅԱՆ

Երևան,
5 ապրիլի 1995 թ.

ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը շնորհավորում է նորընտիր Հայրապետին

«Արարատ» Միութեան անդամներ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Էջմիածնի Կաթողիկոսարա

Ձերդ Սուրբ Օծություն Տեր, ջերմագին շնորհավորում ենք Ձեզ Սու Գրիգոր Լուսավորչի գահի 131-րդ գահակալ ընտրվելու կապակցությա

Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, երկար-երկար տարիների խա ղաղ կյանք և բեղմնավոր աշխատանք:

Հայ ժողովրդի հոգևոր կյանքի լեռնապարում Դուք այսօր փայլում իբրև առաջին կարգի մեծության աստղ, որովհետև միշտ անվել եք ժող վրդի վճիտ ու անսպառ աղբյուրներից:

Դուք օժտված եք երկնային այն հազվագյուտ պարգևով, որ կոչվ է բնածին բարություն, և որի կարիքը մարդն զգում է ամեն օր:

Կրկին ու կրկին շնորհավորում ենք և ցանկանում Ձերդ Սուրբ Օծությ ը քաջառողջություն՝ ի փառս հայ ժողովրդի, նրա հոգևոր միասնությ ու մեր հայրենիքի հզորացման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝

ՀՐԱՆՏ ԲԱԳՐԱՏՅԱՆ

* * *

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածի

Ձերդ Սրբություն,

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր կրոն գործերի պետական խորհրդի անունից ի խորոց սրտի և ջերմորեն շնոր հավորում եմ Ձեզ՝ Ամենայն Հայոց Հայրապետ ընտրվելու ուրախալի առ թիվ:

Ցատ ավելի մեծ խորհուրդ է մարմնավորված Հայաստանյայց Առա քելական Սուրբ Եկեղեցու գլուխ լինելու պատվի ու շնորհի մեջ, քանզ այն կրում է Ամենայն Հայոց Կաթողիկոս պարտավորյալ և խորհրդախոր հուրդ կոչումը: Հայ Եկեղեցին և Ամենայն Հայոց Հայրապետն ունեցել ե մեկ գլխավոր առաքելություն՝ ազգապահպան-ազգահավաք փարոսի և Հա յոց մշտնջենավոր լինելության խորհրդանիշի:

Ձերդ Սրբություն, մաղթում եմ Ձեզ բազում տարիներ, բեղմնավոր Հայրապետական գործունեություն և աստվածաշնորհ կարողություն հանու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միասնության, Հայոց աշ խարհի խաղաղության և բարօրության, Հոգևոր Հայրենիքի գաղափարի պահպանման ու վերամիմաստավորման: Ապավինած Ձեր իմաստությանն ո

փոխին և Ձեր առաքելության մեջ հայ ժողովրդի ու պետության աջակցությանը, ցանկացած դժվարություն կդառնա թվացյալ և հաղթահարելի։

ՀԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՐՔԵՊԵՍԿՈՊՈՍ
ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Լ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Երևան, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՐԹԱՔՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՔԻՆԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Վեհափառ Տեր

Ընդունեցեք իմ շնորհավորանքները և լավագույն մաղթանքները Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրվելու առթիվ։

Համոզված եմ, որ ի բարօրություն հայ ժողովրդի և հայոց պետականության Ձեր առասպանանան գործունեությունը վառ հետք կթողնի Հայ Առաքելական Եկեղեցու բազմադարյա և լուսավոր պատմության մեջ։

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

Ստեփանակերտ,
6 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՔԻՆԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ընդունեցեք իմ շնորհավորանքները և բարի մաղթանքները Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրվելու առթիվ։

Հուսով եմ և համոզված, որ Ձեր քաջահմուտ ղեկավարությամբ Հայ Եկեղեցին զարգանալու է իր բովանդակ միասնականությամբ ի փառս Մայր Հայաստանի և ի շահ հայ ժողովրդի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Կ. ԲԱԲՈՒՐՅԱՆ

Ստեփանակերտ,
6 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ, բարեմաղթում քաջառողջություն, Հայրապետական մեծավյուն առաքելություն:

Հուսով եմ Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոսի Ձեր ազգանվեր գործունեությամբ կշարունակեք բազմադարյա Հայ Առաքելական Եկեղեցու լավագույն ավանդույթները՝ ի շահ հայոց պետականության և աշխարհասփյուռ հայ ազգի բարօրության:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ՝

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ստեփանակերտ,
6 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ջերմօրէն կը շնորհաւորենք Ձերդ Սրբութեան ընտրութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Աթոռին: Կը մաղթենք երկարատեւ եւ արդիւնաշատ գործունէութիւն: Լիայոյս ենք որ Ձերդ Սրբութեան գահակալութեան շրջանին աւելի եւս կ'արդիւնաւորուի նուիրապետական Աթոռներու միջեւ սկիզբ առած գործակցութիւնը եւ կ'ամրապնդուի Հայաստանեայց Եկեղեցւոյ միասնականութիւնը:

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՕ

5 Ապրիլ, 1995

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՆՈՐԸՆՏԻՐ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին—Հայաստանի Հանրապետութիւն

Վեհափառ Տէր,

Յանուն Ռամկավար Ազատական Կուսակցութեան համայն Սփիւռքի անդամակցութեան կու գանք շնորհաւորել Ձեր ընտրութիւնը իբրեւ 131րդ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ձեր Սրբազան առաքելութեան կը մաղթենք ամբողջական յաջողութիւն:

Մեր Հայրենիքի եւ մեր աշխարհացրիւ ժողովուրդի կեանքի այսօրուան պատմական հանգրուանը կը թելադրէ մեզի բոլորանուէր միասնականութեամբ, միացեալ ազգով ու միացեալ եկեղեցիով դիմաւորել 21րդ դարը. մեր անկեղծ ցանկութիւնն է ազգովին մեր ետին թողուլ անմիաբանութիւնը, մեր ժողովուրդը բաժնող վէճերն ու անցեալի դառնութիւնները եւ համախմբուիլ Ձեր շուրջ իբրեւ նորընտիր Ամենայն Հայոց Հայրապետը հայոց ու միասնական կամքով դիմաւորել մեր ազգի եւ մեր Հայրենիքի խոստումնալի ապագան:

Հայցելով Ձեր Հայրապետական օրհնութիւններն ու մատչելով Սուրբ Աջոյդ, կը մնամք,

Որդիական յարգանքներով,

Ի դիմաց Ռամկավար Ազատական Կուսակցութեան
Կեդրոնական վարչութեան՝

ՏՈՔԹ. ԱՐՇԱՒԻՐ ԿԷՕՆՃԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ

ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ
ԱՏԵՆԱԴՊԻՐ

10 Ապրիլ, 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Կը շնորհաւորենք Ձեր Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրութիւնը եւ կը մաղթենք որ Ձեր Գահակալութիւնը դառնայ շնորհաբեր Հայց. Եկեղեցւոյ միութեան, առաւել պայծառացման ու Ազգի բարգաւաճումին:

Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

5 Ապրիլ, 1995

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Վեհափառ Տէր,

Մեր պատմութեան ճակատագրական այս հանգրուանին՝ բազմիլ Ամենայն Հայոց Հայրապետութեան գահին կ'ենթադրէ ամենէն լուրջ պատասխանատուութիւնները, զորս դիմագրաւելու համար Ձեզի կը մաղթենք կոյսով եւ քաջութիւն:

Նորանկախ պետութեան պայմաններուն տակ Մայր Աթոռը կոչուած է աւելի վճռական դեր մը կատարելու Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի մեր զանգուածներու կեանքին մէջ, եւ վստահ ենք թէ Ձեր փորձառութեամբ եւ մտաւորական արժանիքներով լիովին պիտի պտղաբերին Ձեր ճիգերը՝ ի փառս մեր դարաւոր Եկեղեցւոյ եւ մեր հայրենանուէր ազգին:

Ի սրտէ շնորհաւորելով Ձեր գահակալութիւնը, կը մնանք

Խորին յարգանօք՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՑԿԵԱՆՆ ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ
ՀԲԸՄ-Ի

Նյու Յորք, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Յանուն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի ամբողջ կազմին կու գամ շնորհաւորել Նորին Սուրբ Օծութիւնդ, Ամենայն Հայոց Հայրապետի գահուն բարձրանալուն առիթով:

Ամբողջ 16 դարեր հայութիւնը խորունկ յարգանքով յարած է Հայ Եկեղեցւոյ կրօնական աւանդութեանց եւ եկեղեցական դասին հոգեւոր առաջնորդութեան: Համոզուած ենք թէ պատմական այս տարիներուն մարտահրաւէրները աւելի մեծ են քան երբեւէ: Ամէն յաջողութիւն կը մաղթենք Վեհափառութեանդ՝ անուցանելու եւ հզօրացնելու համար մեր հոգեւոր ժառանգութիւնը այս նոր դարուն:

Լաւագոյն մաղթանքներով՝

ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄՈՆ
ՆԱԽԱԳԱՀ ՀԲԸՄ-Ի

Նյու Յորք, 6 ապրիլի 1995 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւնը, աշխարհացրիւ իր բոլոր միաւորներով, անխառն երջանկութեամբ կ'ողջունէ Ձեր ընտրութիւնը Ս. Էջմիածնայ կաթողիկոսական Աթոռին: Կրկնակի գոհունակութիւն է մեզ համար, որ բաղդաւորութիւնը ունեցանք տեսնելու Անկախ Հայաստանի մէջ կաթողիկոսական առաջին ընտրութիւնը, համահայկական մասնակցութեամբ:

Այս պատմական առիթով, հաճեցէք ընդունիլ, Վեհափառ Տէր, մեր բոլորիս սրտաբուխ մաղթանքները՝ ի խնդիր առողջ, արեւշատ ու ազգանուէր գահակալութեան մը՝ որ անկասկածօրէն պիտի սատարէ համազգային մեր իղձերուն իրականացման:

Մատչելով ի համբոյր Ձերդ օծեալ Ս. Աջոյն,

Ի դիմաց Հայ Օգնութեան Միութեան
Կեդրոնական Վարչութեան՝

ՎԱՆՈՒՀԻ ԻՍԱՋԱՆԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏՈՒՀԻ

5 Ապրիլ, 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Միացյալ Նահանգների Խորհրդակցական Կոմիտեն, նրա ատենապետ դոկտ. Գ. Հ. Զոփուրյանը, Ճինիշյան Հիշատակի Ծրագրի պաշտոնեությունը և բազում այլ անձինք միանալով, հղում են Ձեզ իրենց շնորհավորանքները և իրենց աղոթքներն են մատուցում առ Աստված, որպեսզի նրա օրհնությունը լինի Ձեզ վրա, երբ Դուք այժմ ստանձնում եք Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր և պատասխանատու պաշտոնը: Մենք Ձեզ մաղթում ենք բարին Ձեր բոլոր գործերում:

Մենք գոհունակությամբ ենք իմանում, որ Դուք էկումենիկ ուժեղ ոգի եք բերելու Հայ Եկեղեցու Կաթողիկոսությանը: Լինել բաց ամբողջ հայության առջև՝ առանց նկատի առնելու, թե նրանք ո՞ր կրոնական համայնքին են պատկանում, այս է եղել Ճինիշյան Հիշատակի Ծրագրի հիմնական սկզբունքը, համաձայն նրա բարերարի հատուկ հրահանգի: Միացյալ Նահանգների Երիցական Եկեղեցու համար առանձնաշնորհում է Ճինիշյան Ծրագրի գործադրման վերահսկողությունը, որը հնարավորություն է ընձեռում մեզ լայնորեն հաղորդակցության մեջ մտնելու հայկական կրոնական

բոլոր համայնքների հետ: Մենք վստահ ենք, որ այս գործնական էկումենիկ ոգին կկարողանա դույզն չափով նպաստել Աստուծո Արքայության գործին: Մենք հատկապես այս ոգով ենք նայում առաջ Հայ Առաքելական Եկեղեցու հետ մեր ապագա գործունեությանը՝ Ձերդ Սրբության առաջնորդության ներքո:

Անկեղծորեն Ձեր՝

ՄԱՐԳԱՐԵՏ ՕՐՐ ԹՈՄԱՍ
ՏՆՕՐԵՆ ՃԻՆԻՃՅԱՆ ՀԻՃԱՏԱԿԻ ԾՐԱԳՐԻ

Լուիզվիլ (ԱՄՆ), 12 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էմիածին

Ձերդ Սրբություն,

Դոկտ. Բանդազյանը և Գարագյոզյան Հիմնարկության տնօրենների ժողովը միանում են ինձ՝ հղելու Ձեզ մեր սրտագին շնորհավորանքները Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրության և գահակալության առթիվ: Մենք վստահ ենք, որ Դուք կբերեք խաղաղություն և հաշտություն բոլորին: Թող Աստված պարգևի Ձեզ առատաբուխ օրհնություններ և զորություն:

Ջերմեռանդ սիրով և նվիրումով՝

ԼԵՅԼԱ ԳԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Նյու Յորք, 11 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

Վեհափառ Տեր,

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության և անձամբ իմ անունից ի խորոց սրտի շնորհավորում եմ Ձեզ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Հանձին Ձեզ մենք ճանաչում ենք եկեղեցական և ազգային խոշորագույն գործչի, մեծանուն մտավորականի ու բանասերի, որն անառարկելի հեղինակություն է վայելում ի աշխարհ սփռված հայության մեջ: Համոզված ենք, որ դառնա-

լով Գրիգոր Լուսավորչի Աթոռի 131-րդ գահակալը, Դուք Ձեր ուժերն ու տաղանդը կնվիրաբերեք հայ ժողովրդի հոգևոր միավորման և մեր ազգային իղձերի իրականացման վսեմ գործին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ՝

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սուրբ Էջմիածին, Հայաստանի Հանրապետություն

Ձերդ Սրբություն,

Ցանկանում եմ ներկայացնել Ձեզ իմ անկեղծ և խորազգաց շնորհավորանքները, երբ Դուք ստանձնում եք Ձեր նոր պարտականությունները որպես Ամենայն Հայոց Հոգևոր Պետ:

Ոչ հեռավոր անցյալում անկախ Հայաստանի և միացյալ Հայ Եկեղեցու գաղափարները բազմաչարչար հայ ժողովրդի երազանքն ու հույսն էին: Այսօր Հայաստանի Հանրապետությունը իր արժանի տեղն է գրավում միջազգային հասարակության մեջ, և Հայ Եկեղեցին Ձեր ընտրությամբ մի մեծ ու կարևոր քայլ է առնում դեպի մեկ և անբաժան Եկեղեցի դառնալու իրականությունը:

Դուք կոչված եք մի անգամ ևս մեծ և պատասխանատու դեր կատարելու համայն աշխարհում սփռված հայ ժողովրդի կյանքում: Մարտահրավերները փոքր չեն: Ես վստահ եմ, որ Հայ Եկեղեցու ապագան ապահով ձեռքերի մեջ է:

Կլորիան և ես առողջության և հաջողության մեր ջերմագին և լավագույն մաղթանքներն ենք հղում Ձեզ: Հուսով ենք, որ երբ Հարավային Կալիֆոռնիա գտնվելու առիթն ունենաք, կկարողանանք հանդիպել միմյանց:

Հարգանքներով՝

ԺՈՐԺ ԴՈՔՄԵՋՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐԻՉ

Լոս Անջելես, 12 ապրիլի 1995 թ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Մայր Աթոռ Ս. Էջմիածին—Հայաստան

Վեհափառ Տեր,

Ձեր ընտրության առթիվ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, խընդրում եմ ընդունել Ձեր առաքելական բարձր պաշտոնում լիակատար հաջողության, քաջառողջության և բարօրության իմ լավագույն մաղթանքները:

Որդիական զգացումներով՝

ՌՈԲԵՐՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ

Լիսաբոն, 7 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

Վեհափառ Տեր,

Հոգեկան մեծ ուրախությամբ շնորհավորում ենք Ձեզ մեր Եկեղեցու և ժողովրդի ճշմարիտ ընտրությամբ Լուսավորչի շնորհափառ գահին որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս բազմելու առիթով:

Ձեր անվերապահ հեղինակությունը, որ մեկ անգամ ևս հաստատվեց Ազգային-Եկեղեցական Ժողովում, Ամենայն Հայոց Հովվապետի ծանր պարտականությամբ ամրապնդված, պիտի հավաքի ի մի մեր հոգիները, մեր մտքերը, մեր իղձերն ու ջանքերը՝ հանուն հայոց ապագայի լուսավորության ու զորության:

Թող Աստված պահպանի Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը և թող կորով ու առողջություն տա Ձեզ, որ երկար տարիներ արթուն իմաստնությամբ հսկեք մեր ազգին՝ առաջնորդելով նրան դեպի փրկություն և հեռու պահելով ամեն փորձությունից:

«ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

10 ապրիլի 1995 թ.

Վեհափառ Հայրապետը Ղոյի Ուղղափառ Եկեղեցու
Պատրիարք Ն. Ս. Ամբա Շընուդա Գ-ի հետ

Վեհափառ Հայրապետը Հնդիկ Մալաբար Ուղղափառ Եկեղեցու
Կաթողիկոս Ն. Ս. Մորան Մար Բասիլիոս Մար Թոմա Բ-ի հետ



Վեհափառ Հայրապետը Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Ն. Ս. Աբունա Պաուլոսի հետ

Վեհափառ Հայրապետը Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Ֆիլարետի հետ

Վեհափառ Հայրապետի հանդիպումը Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ կարդինալ Կասիդիի հետ

Վեհափառ Հայրապետի հանդիպումը ԻԻՀ դատվիրակության հետ՝ գլխավորությամբ Նիա Մոքիանիի